ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՐԾԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/1385/02/24 | ք. Երևան
8 Նոյեմբերի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, նախագահությամբ դատավոր Ռ.Մ.Բունիաթյանի, ծանոթանալով թիվ ԵԴ2/1385/02/24 քաղաքացիական գործին ըստ հայցի «Բիլդինգ Կապիտալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընդդեմ ՀՀ վիճակագրական կոմիտեի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 15.02.2024 թվականի թիվ 63-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

«Բիլդինգ Կապիտալ» ՍՊ ընկերության ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ ՀՀ վիճակագրական կոմիտեի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 15.02.2024 թվականի թիվ 63-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին:
Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր Ա. Թումասյան) 05.03.2024 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:
«Բիլդինգ Կապիտալ» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 05.03.2024 թվականին կրկին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան:
Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր Ա. Թումասյան) 12.03.2024 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:
«Բիլդինգ Կապիտալ» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 12.03.2024 թվականին կրկին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան:
Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր Թ. Ղուկասյան) 03.08.2023 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ, պատասխանողից պահանջվել է ներկայացնել թիվ «ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/9» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր Թ. Ղուկասյան) 29.04.2024 թվականի վճռով «Բիլդինգ Կապիտալ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ վիճակագրական կոմիտեի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 15.02.2024 թվականի թիվ 63-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջի

մասին, մերժվել է:
Վերոնշյալ վճռի դեմ հայցվոր «Բիլդինգ Կապիտալ» ՍՊ ընկերության ներկայացուցիչը ներկայացրել է վերաքննիչ բողոք:
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.06.2024 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակի: Որոշմամբ բեկանվել է ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի թիվ ԵԴ2/1385/02/24 քաղաքացիական գործով 29.04.2024 թվականի վճիռը, և գործն ուղարկվել է նույն դատարան ամբողջ ծավալով նոր քննության:
Թիվ ԵԴ2/1385/02/24 քաղաքացիական գործը 01.11.2024 թվականին մակագրվել է դատավոր Ռ.Բունիաթյանին, որը հասանելի է դարձել 06.11.2024 թվականին:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանի եզրափակիչ դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու մասին դատական ակտ կայացնելու դեպքում դատարանը գործն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, կայացնում է գործը վարույթ ընդունելու մասին որոշում:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 413-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի նոր քննությունը դատարանում իրականացվում է դատարանում գործերի քննության համար սույն օրենսգրքով սահմանված կանոններով՝ հաշվի առնելով սույն գլխի առանձնահատկությունները:
Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 411-րդ, 166-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածներով՝ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Թիվ ԵԴ2/1385/02/24 քաղաքացիական գործն ըստ հայցի «Բիլդինգ Կապիտալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընդդեմ ՀՀ վիճակագրական կոմիտեի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 15.02.2024 թվականի թիվ 63-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ և հրավիրել դատական նիստ՝ 2024 թվականի նոյեմբերի 22-ին, ժամը 15:00-ին, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում (Արաբկիր նստավայր, ք.Երևան, Հ.Ներսիսյան 10):
2. Որոշումը ուժի մեջ է մտնում կայացման պահից:

Դատավոր՝ Ռուբեն Բունիաթյան

Digitally signed by BUNIATYAN RUBEN 1312740051
Date: 2024.11.14 07:35:50 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am